ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 077-58-31-48, berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 26

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 11 հերթական նիստի օրակարգի հետևյալ հարցերը:
1.Բերդիկ համայնքի համայնքապետարանի և համայնքապետարանին կից գործող գրադարանի 2020 թվականի գույքագրման արդյունքների ամփոփման և հաստատման մասին:
2.Բերդիկ համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
3.Բերդիկ համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին :

Կողմ -3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (բացակա)

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (բացակա)

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 077-58-31-48, berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 27-Ա

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով:

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդիկ համայնքի համայնքապետարանի և համայնքապետարանին կից գործող գրադարանի 2020 թվականի գույքագրման արդյունքները՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ 0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Բերդիկ համայնքի ավագանու

2020 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 27-Ա որոշում

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման հանձնաժողովը ի դեմս նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ.Հարությունյանի, անդամներ՝ համայնքապետարանի վարորդ Ս.Ֆահրադյանի համայնքապետարանի գրադարանավար՝ Լ.Հակոբյանի, հիմք ընդունելով 2020թ. դեկտեմբերի 14-ի թիվ 27-Ա որոշումը, կազմեցինք սյուն ակտը այն մասին,որ ս/թ նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 10-ը կատարեցինք համայնքին պատկանող գույքի, կառույցների , շինությունների և առկա այլ ապրանքների գույքագրում՝

Հ/Հ	ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ձեռք բերման տարեթիվը	Քանակը(միավոր)	ձեռք բերման արժեքը(ՀՀ դրամ)	Հաշվարկված մաշվածություն	Գույքագրման արդյունքում	Տեխնիկական վիճակը
1	Համայնքապետարանի շենք	1973	1	42.562.000	0	առկա	բավարար

2	Զգեստապահարան	անհայտ	1	103.000	0	առկա	բավարար
3	Երկաթյա պահարան	անհայտ	1	14 136	0	առկա	բավարար
4	Գազի խողովակաշար	անհայտ	1	11 199 784	0	առկա	բավարար
5	Ավտոմեքենա Նիվա	2006	1	784.8	0	առկա	բավարար
6	Օդորակիչ	անհայտ	1	380 000	0	առկա	բավարար
7	Համակարգիչ	անհայտ	1	320 000	0	առկա	բավարար
8	Համակարգիչ	անհայտ	2	Նվիրատվություն	0	առկա	բավարար
9	Տպիչ սարք	անհայտ	1	Նվիրատվություն	0	առկա	բավարար
10	Զուգարանի շենք	անհայտ	1	36877	0	առկա	բավարար
11	Համայնքի	անհայտ	1	140 000	0	առկա	բավարար

	ղեկավարի աշխատանքային սեղան դիմադիր և կողադիր սեղան, սեղաններ,տումբա						
12	Համակարգչի սեղան	անհայտ	3	165 000	0	առկա	բավարար
13	Գրասեղան	անհայտ	2	90 000	0	առկա	բավարար
14	Աթոռ	անհայտ	1	150 000	0	առկա	բավարար
15	Գրապահարան	անհայտ	1	170 000	0	առկա	բավարար
16	Համակարգիչ INTEL	2017	1	300 000	150 000	առկա	բավարար
17	Տեսանկարահանող սարք	2017	6	400 000	200 000	առկա	բավարար

18	Աթոռ ղեկավարի	2017	1	180 000	164 000	առկա	բավարար
19	Ընդունարանի կահույք	2017	1	150 000	120 000	առկա	բավարար
20	Աթոռ գրասենյակի	2017	6	78 000	54 600	առկա	բավարար
21	Նոթբուք	2017	1	400 000	100 000	առկա	բավարար
22	Տպիչ սարք CANON	2017	1	95 000	47 500	առկա	բավարար
23	Սկաներ HPL2733A	2017	1	53 700	40 200	առկա	բավարար
24	Տեսանկարահանող սարք	2018	1	110 000	82 500	առկա	բավարար
25	Հեռուստացույց HISENS 32N2170HW	2018	1	125 000	93 750	առկա	լավ
26	Ջրի ապարատ	2018	1	62 000	46 500	առկա	լավ

	VIKAS VWDI55W						
27	Ներկառուցվող գազ SIMFEN H6MR41 SAI	2018	1	57 000	42 750	առկա	լավ
28	Գրադարանի գրքեր Ընդ.		6639			առկա	բավարար
29	Ձեռք բերված գրքեր	2017	32	49 980		առկա	լավ
30	Ձեռք բերված գրքեր	2017	49	50 000		առկա	լավ
31	Պոլիէթիլենային խողովակ PE 100, d-63մմ	2018	200մ	175 200		առկա	
32	Պոլիէթիլենային խողովակ PE 100, d-20մմ	2018	135մ	21 600		առկա	
33	Պոլիէթիլենայ	2017	450մ	387 180		առկա	

	ին խողովակ PE 100, d-63մմ PN10						
34	Պոլիէթիլենայ ին խողովակ PE 100, d-20մմ	2017	133մ	15 960		առկա	
35	Լվացարան	2018	1	35 000	26 200	առկա	լավ
36	Ցուցանակ	2018	1	40 000	36 000	առկա	լավ
37	Լինոլիում	2018	94ք/մ	131 600	105 200	առկա	լավ
38	Շերտավարա գույր	2018	32.9ք/մ	125 020	109 000	առկա	լավ
39	Վարագույր	2018	24ք/մ	48 000	38 400	առկա	լավ
40	Խոհանոցային կահույք	2018	1	500 000	450 000	առկա	լավ
41	Պահարան	2018	2	240 000	216 000	առկա	լավ

42	Կաթսա իտալական	2018	1	412 000	350 200	առկա	լավ
43	Ռադիատոր տիտան	2018	70	231 000	169 000	առկա	լավ
44	Ռադիատոր սավրալիտ	2018	80	248 000	210 800	առկա	լավ
45	Երաժշտական նվագարկիչ GEEPAS GMS-8518	2019	1	186 000	139 500	առկա	լավ
46	1172 CANON Բազ,/ֆունկ սարք պիղմա MG2540S	2020	1	37500		առկա	լավ
47	Օդորակիչ LEBERG LBS-LOK10UA	2020	1	149 000		առկա	լավ
48	Սառնարան Indesit ES15	2020	1	135 000		առկա	լավ

49	Լուսավորվող ծավալի տառեր	2020	2	350 000		առկա	լավ
	Ընդամենը			61.694.337	2.992.100		

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Անդամներ՝ Ս.Ֆահրադյան

Լ.Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂՐ՝ ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 077-58-31-48, berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28-Ն

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ , 10-րդ , 11-րդ , 12-րդ , 13 և 14-րդ հոդվածների և « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի պահանջներով՝

Բերդիկ համայնքի ավագանի որոշում է՝

Սահմանել Բերդիկ համայնքի վարչական տարածքում 2021 թ - ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1 – ի :

Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Բերդիկ համայնի ավագանու 2020
թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 28-Ն որոշման

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

<< Արարատի մարզի Բերդիկ համայնքի տարածքում 2021թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար

ա.Բերդիկ համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների համար՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպեսնաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝25000 դրամ:

Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերեսունեցող շենքերի և շինություններիհամար՝ 1500դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 2500 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների

վերակառուցման , վերականգման, ուժեղացման , արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ՝1500դրամ:

բ/բացի շենքերի և շինությունների վերկառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսին ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:

գ.նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա ,սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերիը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար ՝ 2500 դրամ:

4) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքներիր և (կամ)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյանկի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողի իմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500դրամ,
100-ից 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների

ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000դրամ,
- 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետրի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ

5) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացության առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

6) Ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

գ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ) այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700դրամ:

Բերդիկ համայնքի ավագանու որոշմամբ սույն դրույքաչափերում կիրառվել է 0,5 գործակիցը:

2.Բերդիկ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը՝

1/համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքինը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար փոխհատուցման վճար՝ 1000 դրամ

2/ Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ,

3/տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված զանազան ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար՝ 1000 դրամ :

3. Համայնքում իրավաբանական անձանց համար աղբահանության վճար սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար .

1) Առևտրի /այդ թվում շուկաների /, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 20 << դրամ/ 1 քառ.մ:

2) Կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային շինություններ՝ 2 << դրամ/1 քառ.մ>> :

4) Արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 4 << դրամ /1 քառ.մ :

5/ աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝

ա/ ըստ հաշվառվա ծ անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար առավելագույնը ամսական 50 դրամ կամ

բ/ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերոսի համար՝ առավելագույնը 1 դրամ:

6/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա/ըստ ծավալի մեկ խորհանարդ մետր աղբի համար առավելագունը 3000 դրամ.

7/Անասնաբուժական ծառայությունների համար սահմանել վճար՝

ա/մեկ պայմանական միավոր գլխաքանակի համար 200 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ՝ ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, 077-58-31-48, berdik.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 29

ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայասատնի Հանարպետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով

Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝

Բերդիկ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
1./06-04-01-52/ Արտաքին լուսավորության ցանցի շահագործում ծրագրի 4212 /կոմունալ ծառայություններ/ հոդվածից 60.0/վաթսուն հազար/ դրամ տեղափոխել 10-07-01-54 /սոցիալապես անապահով անձանց աջակցություն/ ծրագրի 4729/այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին:
2.01-01-01-51 /կառավարման մարմնի պահպանում/ծրագրի 4211/բանկային ծառայություններ/ հոդվածից 40.0 /քառասուն հազար/ դրամ տեղափոխել 10-07-01-54 /սոցիալապես անապահով անձանց աջակցություն/ ծրագրի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին:
3.01-01-01-51/կառավարման մարմնի պահպանում/ ծրագրի 4212 /կոմունալ ծառայություններ/ հոդվածից 260.0 /երկու հարյուր վաթսուն հազար/ դրամ տեղափոխել 10-07-01-54 /սոցիալապես անապահով անձանց աջակցություն/ ծրագրի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին:
4.01-01-01-51/կառավարման մարմնի պահպանում/ ծրագրի 4269 /մշակութային միջոցառումների իրականացում/ հոդվածից 200.0 /երկու հարյուր հազար/ դրամ տեղափոխել 10-07-01-54 /սոցիալապես անապահով անձանց աջակցություն/ ծրագրի 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածին:

Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**